ՀԱՆԳԻՍՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋՆԱՎՈՒՐՅԱՆԻ
(1880—1962)

Օգոստոսի 7-ին, Մայր Աթոռում, միաբանական իր սենյակում, հանկարծամահ եղավ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Մայր Աթոռի երիցագույն միաբան գերաշնորհ Տ. Եղնիկ եպիսկոպոս Ադեավուրյանը, 82 տարիկան հասակում։

Հանգուցյալ սրբազանը ծնվել էր 1880 թվականի հունիսի 15-ին, Ալաշկերտում (Թոփրագկալի), երկրագործի ընտանիքում։

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի դպրոցում։ 1894 թվականին ընդունվում է Գևորգյան ճեմարանը, որի գասընթացն ավարտելով 1902 թվականին, հրավիրվում է Նոր-Ջուղա՝ ուսուցչության։

1906 թվականին ուսուցչության պաշտոն է ստանձնում Կարսի և Արտահանի հայկական դպրոցներում մինչև 1912 թվականը։ Ապա աշխատում է Լենինականում, Կիրովականում և Երևանում որպես հաշվապահ։

1944 թվականի մարտի 1-ին ձեռնադրվում է վարդապետ։ 1945 թվականին նշանակվում է Ս. Գեղարդի վանքի վանահայր։

1954 թվականի սեպտեմբերին նշանակվում է առաջնորդ Բաքվի հայոց թեմի, որի վրա եպիսկոպոսանում է 1955 թվականին։

1955 թվականի աշնան, Ազգային-եկեղեցական ժողովում ընտրվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և նշանակվում է Մայր Տաճարի ժամորհնող։

Հանգուցյալի վերջին օծումը և թաղումը կատարվեցին հինգշաբթի, օգոստոսի 9-ին։

Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը Մայր Տաճարում պատարագից և կատարից հանգուցյալի վերջին օծումը։ Սրբազանը իր զամբանական ճառում խոսեց հանգուցյալի կյանքի և գործունեության գլխավոր գծերի վրա։

Դրեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հանգուցյալի թաղման արարողությունը և աճյունը ամփոփվեց Ս. Գայանեի վանքի միաբանական դերեզմանոցում։

Հանգի՜ստ նրա ոսկորներին։